«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

Դաստիարակ՝ Նելի Սամվելի Օհանյան

Մանկապարտեզ՝<<ք. Երևան h.143 մսուր-մանկապարտեզ>>ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն ……3
2. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:……5
3. Հետազոտական մաս……12
4. Եզրակացություն……15
5. Օգտագործված գրականության ցանկ……16

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Դերային խաղը հանդիսանում է դաստիարակության և կրթության զարգացման միջոց,որը ձևավորում է երեխայի անհատականությունը:

Դերախաղով երեխան վերարտադրում է իր երազած աշխարհը,նմանվում է հեքիաթի հերոսին կամ մեծահասակներին:Դերախաղի ժամանակ զարգանում է համերաշխ կոլեկտիվը:

Ընդհանրապես խաղերը մեծ նշանակություն ունեն երեխայի բնավորության դաստիարակման գործում:

Դերային խաղերը անհրաժեշտ են երեխաներին,այլապես նրանք կմեծանան բարդույթավորված, սեփական կարծիքից զուրկ,ագրեսիվ:

Դերախաղի օգնությամբ լուծվում են մի շարք խնդիրներ՝ երեխաները բացահայտում են իրենց ներքին աշխարհը,լուծում են ներքին կոնֆլիկտները,բարձրանում է երեխաների ինքնագնահատականը:

Երեխան իր կյանքի ոչ մի փուլում չի սովորի այդքան շատ,ինչքան խաղային գործունեության ընթացքում:

Այն երեխաները,որոնք չեն խաղում, նման են,պարզապես,<<ծերացած մանուկների>>:

Առ.

Բահաթրյան

Ըստ Առ. Բահաթրյանի ոչինչ չի կարող զարգանալ առանց գործողության,իսկ խաղը՝ երեխայի լավագույն գործողությունն է:Խաղը ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում:

Դերային խաղերի նպատակն է սովորեցնել երեխաներին ապրել համերաշխ,զիջել ընկերներին,հոգ տանել միմյանց մասին,լինել ստեղծագործ ու երևակայող:

Աշխատանքի կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից,երկու գլուխներից,որոնք էլ բաժանվում են ենթագլուխների,եզրակացությունից,օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

1. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

<<Երեխան, որը չի խաղում, երեխա չէ, իսկ մեծահասակը, որը չի խաղում, կորցրել է այն երեխային, որն ապրում էր իր մեջ>>:

Պաբլո Ներուդա

Հկայական է խաղի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման գործում:

Այն դիտվում է որպես մանկության պարտադիր ուղեկից,որն ի հայտ է գալիս որոշակի տարիքային փուլում:

Բազմաթիվ մանկավարժներ,հոգեբաններ խաղը դիտում են որպես նախադպրոցականի ինքնուրույն ստեղծագործական գործունեություն՝կարևորելով այն,որ խաղն ապահովում է երեխայի նախաձեռնությունը,ձեռներեցությունը,նպատակաուղղվածությունը:

Երեխաների խաղն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով:

Նրանցից հիմնականն այն է,ու խաղը երեխայի կողմից շրջապատող կյանքի,մեծերի գործունեության նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է,ընդ որում այնպիսի պայմաններում,որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ:Խաղը կարող է ծառայել երեխայի դաստիարակության և զարգացման բարդ խնդրին միայն այն դեպքում,երբ այն ներգրավվի կազմակերպվող և կառավարվող մանկավարժական գործընթացի մեջ:Դաստիարակն օգտագործում է խաղերի բովանդակությունը իրականության նկատմամբ դրական վերաբերմունքի,մարդկանց հանդեպ սիրո զգացմունք մշակելու նպատակով:

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է:Խաղի ժամանակ երեխաներն առաջին անգամ փորձեր են անում շփվելու իրենց հասակակիցների հետ:

Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ,միաժամանակ նա փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ,որ ինքը դեռ մեծ չէ:

Փոքրիկը ցանկանում է դրանք բավարարել անմիջապես,նա ամեն կերպ ջանում է գործել մեծի պես,սական այդ ձգտումը չի համապատասխանում իր հնարավորություններին:Խաղի մեջ ընդօրինակելով մեծերի գործունեությունը և նրանց հետ կիսելով իր համար հասկանալի ուրախություններն ու տխրությունները՝ երեխան նման յուրօրինակ ճանապարհով դառնում է իրական կյանքի մասնակիցը:

Խաղը հասարակ զբաղմունք չէ կամ դատարկ հաճույք:Այն ուրախացնում է երեխային,դարձնում անհոգ և կենսուրախ:Երեխան խաղի ժամանակ շարժվում է,կատարում բազմաթիվ օգտակար շարժումներ.վազում է,թռչկոտում,կառուցում և այլն:

Այդ կերպ մեծանում է առողջ,ամուր,ուժեղ և հնարամիտ:

Խաղը երեխայի մեջ զարգացնում է տրամաբանությունը,երևակայությունը:

Միայն խաղալով են երեխաները սովորում համերաշխ ապրել,զիջել ընկերներին,հոգ տանել միմյանց մասին:Ստեղծագործական խաղերի բնորոշ առանձնահատկությունն այն է,որ երեխաները իրենք են ստեղծում խաղը,և խաղային գործունեությունը կրում է ընդգծված,ինքնագործ,այսինքն՝ստեղծագործական բնույթ:Երեխան հավատում է իր հորինած կերպարին:Նա ոչ միայն հավատում է,այլև ինքն է կատարում այդ դերերը:

Սյուժետադերային խաղը որպես ստեղաործական երևակայության զարգացման պայման կարող է դիտվել այն դեպքում,երբ մեծահասակն իրականացնելով մանկավարժական ղեկավարում՝ ստեղծում է համապատասխան մթնոլորտ.չի խախտում երեխայի նախաձեռնությունը և խաղի ընտրության ազատությունը:Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա,ում ընդօրինակում

է:Հետաքրքիր է,որ երեխան ոչ թե վերարտադրում է կերպարի ամբողջ գործունեությունը,այլ միայն այն գծերը,որոնք անհրաժեշտ են տվյալ խաղի ընթացքի համար:

Հատկապես փոքրերի խմբում դաստիարակը պետք է հանդես գա ուղղորդողի և խաղընկերոջ դերում.

- Օգնել երեխաներին՝ ձևավորելու ոչ միայն կողք-կողքի,այլև միմյանց հետ խաղալու,հասակակիցների խաղերին բարյացակամ վերաբերմունք դրսևորելու կարողություն,
- Սովորեցնել խաղալիքներով և տարբեր առարկաներով կատարել տարբեր գործողություններ,
- Օժանդակել երեխաներին՝ ծանոթ գործողությունները փոխադրել խաղային տարբեր իրադրությունների մեջ,
- Հուշող հարցերի միջոցով նպաստել խաղի զարգացմանը:

Ստեղծագործական խաղերը կազմակերպվում են հիմնականում խմբային ձևով:Դրանց մասնակցում են մի քանի երեխաներ,որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը:

Հարկավոր է երեխաների մեջ ձևավորել կարողություն՝ ստեղծագործական խաղերի ժամանակ օգտագործել կառուցողական,շինարարական տարբեր պարագաներ,ստեղել հետաքրքիր կառույցներ,ընկերների հետ կարողանալ փոխանակել կառուցողական նյութերը և ստանձնել համապատասխան դերեր:

Սյուժետային խաղերի ղեկավարումը նպատակաուղղված է խաղի մտահղացման հստակեցմանը,բովանդակության զարգացմանը,խաղային գործողությունների,դերերի ճշտմանը և երեխաների ընկերասիրական հարաբերությունների ստեղծմանը:

Ղեկավարումը չպետք է հարկադրող,վիրավորող բնույթ կրի կամ երեխաների կողմից առարկությունների,բողոքի տեղիք տա կամ առաջացնի խաղից դուրս գալու ցանկություն:

Դերային խաղը դաստիարակության և կրթության զարգացման միջոցն է,որը ձևավորում է երեխայի անհատականությունը:

Դերախաղով երեխան վերարտադրում է իր երազած աշխարհը,նմանվում է հեքիաթի հերոսին:Երեխայի կողմից օգտագործվում են արտահայտչական միջոցներ՝ կեցվածք,արտահայտիչ խոսք,դիմախաղ,շարժում,բեմական հագուստ:

Դերաղաղի ժամանակ զարգանում է համերաշխ կոլեկտիվը:

Ընդհանրապես խաղերը մեծ նշանակություն ունեն երեխայի բնավորության դաստիարակման գործում:Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է դերային խաղը:Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով,որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում:Երեխան իր կյանքի ոչ մի փուլում չի սովորի այդքան շատ,ինչքան խաղային գործունեության ընթացքում:

Սյուժետադերային խաղերի առանձնահատկությունները մանրաման ուսումնասիրվել են Դ.Բ.Էլկոնինի,Ա.Վ.Զապարոժեցի,Ռ.Ի.Ժուկովսկայայի,Ա.Պ.Ուսովայի կողմից,որոնք իրենց հետազոտութունների արդյունքում առանձնացնում են սյուժետադերային խաղերի հիմնական կառուցվածքային տարրերը և առաջարկում խաղի բաղադրատարրերի ձևավորման մանկավարժական համապատասխան պայմաններ:

Ն.Ա.Կորոտկովան և Ն.Յ Միխայլենկոն հատուկ կարևորում են սյուժետադերային խաղերի ղեկավարման ժամանակակից մոտեցորմների կիրառման անհրաժեշտությունը:Եթե սյուժետադերային խաղերի ավանդական ղեկավարման պայմաններում հիմնական շեշտը դրվում է խաղերի բովանդակության հարստացման վրա,ապա ժամանակակից եղանակները ընդգծում են խաղի ընթացքում սյուժեի ուղղվածության փոփոխման դերը այն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով:

Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ՝ Յ.Ա. Կոմենսկին,Ժ.Ժ. Ռուսոն,Ֆ. Ֆրյոբելը,Կ.Դ. ՈՒշինսկին,ինչպես նաև խոշորագույն հայ մանկավարժներ,մտածողներ և գրողներ՝ Խ.Աբովյանը,Ղ.Աղայանը,Հ.Թումանյանը, Առ.Բահաթրյանը և այլոք:

Խ.Աբովյանը հորդորում էր մանկավարժներին <<չզրկել երեխաներին անմեղ խաղերից>>:Իր <<Պարապ վախտի խաղալիք>>աշխատության մեջ նա կարևորում է երեխաների ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկան խաղերի դերը:

<<…Ամեն բան ինչ որ երեխային տրվում է խաղով,ուրախությունով ընդունում է,հեշտ էլ յուրացնում՝առանց ձանձրանալու,առանց հոգնելու>>:

Հովհաննես Թումանյան

Այն երեխաները,որոնք չեն խաղում,նման են,պարզապես,<<ծերացած մանուկների>>:

Առ. Բահաթրյան

Ըստ Առ. Բահաթրյանի ոչինչ չի կարող զարգանալ առանց գործողության,իսկ խաղը՝ երեխայի լավագույն գործողությունն է:

Խաղը ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում:

Աննշան միջամտությունը մանկավարժի կողմից կարող է բոլորովին փոխել խաղի ընթացքը և կրկնակի հետաքրքրություն առաջացնել խաղը նորովի կառուցելու հանդեպ:

Որո՞նք են երեխաների համար դերային խաղերի առավելությունները

Երեխաների համար դերային խաղերի շատ օգուտներ կան:

Երազած և երևակայական աշխարհում իրական հերոների պես զգալը կարևոր է,որը շատ առավելություններ է բերում փոքրիկների համար:

- Դերախաղերը օգնում են խթանել երեխաների ինչպես տեղծագործականկարողությունները,այնպես էլ երեխայի

երևակայությունը:Սա մի բան է,որը ցավոք անհետանում է էկրանների և տեսախաղերի պատճառով:

- Մարդկանց առջև խոսելով՝օգնել բարելավել ձեր սոցիալական հմտությունները:
- Դերախաղերում երեխաները պետք է իրենց տարբեր կերպարների տեղ դնեն,մի բան,որն օգնում է զարգացնել երեխաների մոտ տարբեր հույզեր:
- Երեխաները պետք է կենտրոնանան իրենց ապրած պատմության վրա,ինչը կատարյալ է որոշ որոշումներ կայացնելիս:
- Դերային խաղերի մեկ այլ առավելությունն այն է,որ դրանք թույլ են տալիս զարգացնել երեխաների հիշողությունը:
- Դերախաղ ունեցող երեխաները ցանկացած պահի կսովորեն,որ իրենց բոլոր գործողությունները մի շարք հետևանքներ կունենան:
- Երեխաները հասկանում են,որ իրենք պետք է պատասխանատու լինեն իրենց բոլոր գործողությունների համար:

Դերային խաղերի ամենատարածված խաղերից է <<**Բժիշկ**>>խաղը:

Բժիշկ խաղալու համար երեխան պետք է ունենա սպիտակ վերարկու,բժշկական դիմակ և իրեր:

Բժիշկ խաղալու համար երեխաներից մեկը կարող է հանդես գալ որպես բժիշկ,իսկ մյուս երեխան որպես հիվանդ:

Այս խաղը կօգնի երեխաներին հաղթահարել հիվանդանոց դիմելու,կամ բժշկի նկատմամբ ունեցած վախերը:Երեխաների մետ կձևավորվի հարգանք՝բժշկի մասնագիտության նկատմամբ:

Նման խաղերի միջոցով,երեխաները պատկերացնում են,թե ինչ են ուզում դառնալ ապագայում:

2.Հետազոտական մաս

Թեման

Համագործակցություն

Տեսակը

Հեքիաթի ընթերցում<<Պապն ու շաղգամը>>

Նպատակը

Զարգացնել գեղարվեստական ստեղծագործությունը լսելու,գնահատելու,հարցերին պատասխանելու կարողությունը,կապակցված խոսքը,հարստացցնել բառապաշարը շաղգամ,համագործակցել բառերով:

Նախապատրաստական աշխատանք

Երեխաների հետ զրուցել փոխօնության,համագործակցության մասին,ընթերցել Գեղեցիկ Մովսիսյանի <<Արևիկի ժապավենը>>,Կ.ՈՒշինսկու <<Երկու այծ>>ստեղծագործությունները:

Անհրաժեշտ ուսումնական նյութեր

<<Պապն ու շաղգամը>>ռուսական ժողովրդական հեքիաթի նկարազարդումները,ինչպես նաև ձեռքի տակ ունենալ այդ հեքիաթի հերոսների մասնակցությամբ խաղալիքները:

Ընթացքը

Խթանման փուլ

Փորձեցի մենակ տեղափոխել խմբասենյակի մանկական սեղանիկներից մեկը և ձևացրեցի,որ շատ դժվար է և չեմ կարող այն տեղափոխել:Երեխաներից մեկին խնդրեցի օգնել ինձ,սակայն նա էլ դժվարացավ և չկարողացավ:Խնդրեցի այս անգամ երկրորդ երեխային,հետո ՝ երրորդին,չորրորդին:Միաին բռնելով սեղանի չորս կողմերից՝սեղանը հեշտությամբ բարձրացրեցինք և տեղաշարժեցինք՝ դնելով մի տեղից մեկ այլ տեղ:Երեխաների հետ քննարկեցինք,թե ինչու սկզբում դժվար էր,իսկ հետո ավելի հեշտությամբ կատարեցինք առաջադրանքը:
Ամփոփելով կատարվածը բացատրեցի երեխաներին,որմենակ դժվար էր,քանի որ սեղանը ծանր էր,իսկ երբ օնության հասան ընկերները,սեղանը կարողացանք տեղափոխել:

Իմաստի ընկալման փուլ

Ընթերցեցի <<Պապն ու շաղգամը>>ռուսական ժողովրդական հեքիաթը և յուրաքանչյուր իրավիճակն ներկայացրեցի ամփոփ մտքին զուգահեռ:
Քննարկեցինք
-Ի՞նչ էր ցանել պապը:
-Ինչու՞ պապը շաղգամը հողից մենակ չկարողացավ հանել:
-ՈՒ՞մ օգնության կանչեց պապը:
-ՈՒ՞մ օգնության կանչեց տատը:
-ՈՒ՞մ օգնության կանչեց թոռնիկը:
-ՈՒ՞մ օգնության կանչեց շնիկը:
-ՈՒ՞մ օգնության կանչեց փիսիկը:
-Ովքե՞ր օգնեցինպապին:
-Ինչի՞ մասին էր հեքիաթը:/երեխաները նշեցին,որ հեքիաթն օգնության,համագործակցության,համերաշխության մասին էր/

Պարապմունքի ընթացքում անդրադարձա հեքիաթի համապատասխան հատվածներին՝ ցուցադրելով և՛ պատկերազարդ նկարները, և՛ ձեռքիս տակ ունեցած հեքիաթի համար նախատեսված խաղալիքները և մեկ անգամ էլ արտահայտիչ ընթերցեցի հեքիաթը:

Կշռադատման փուլ

Պարապմունքի ավարտին ընթերցեցի ասացվածքներ միասնության, փոխօգնության,
համերաշխության մասին և բացատրեցի դրանց իմաստը՝ ընդգծելով <<Ձեռքը ձեռք կլվա,երկու ձեռքը՝ երես>>:

Հետազոտության մեթոդները

Հետազոտության ընթացքում օգտվել եմ զրույցի և դիտման մեթոդներից:

Հետազոտության մասնակիցները

Հետազոտությունը կատարվել է կրտսեր 2-րդ խմբում,որին մասնակցել են 17 սան:

Արդյունքների վերլուծություն

Հետազոտության համաձայն պարզեցի,որ երեխաները առանց վարանելու մեծ ուրախությամբ և պատրաստակամությամբ օգնեցին ինչպես ինձ,այնպես էլ իրենց ընկերներին:

Եզրակացություն

Նախադպրոցական մանկության շրջանում անփոխարինելի է դերային խաղերի դերը:

Դերային խաղի նպատակն է այնպես անել,որպեսզի երեխաներն ինքնադրսևորվեն,լինեն հնարավորինս ինքնուրույն և նախաձեռնող:

Դերախաղը հաճելի, զվարճալի և ուսանելի պետք է լինի
Դերախաղը կարող է լինել ինքնաբուխ
Սահմանափակումներ չպետք է լինեն, որպեսզի երեխան չձանձրանա
Դերային խաղերի կիրառությունը զարգացնում է երեխաների միջև միջանձնային հարաբերություններ

Ակտիվորեն զարգանում է երեխայի ստեղծականությունը և երևակայությունը

Խաղը երեխայի կյանքի զարգացման գործոնն է
Դերային խաղը հանդիսանում է դաստիարակության և կրթության զարգացման միջոց,որը ձևավորում է երեխայի անհատականությունը
Դերային խաղերը անհրաժեշտ են երեխաների,այլապես նրանք կմեծանան բարդույթավորված, սեփական կարծիքից զուրկ, ագրեսիվ
Մանկական խաղը մշակվել է հոգեբանության կողմից և համարվում է ամենակարևոր գործընթացը երեխայի կյանքում, հատկապես նախադպրոցականի կյանքում
Խաղը երեխային պատրաստում է ապագա կյանքին:

Դերախաղի օնությամբ երեխան ձեռք է բերում նոր որակներ,ինչպիսիք են շփվելու,իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կոորդինացնելու ունակությունը,զացմունքների արտահայտությունը:

Դերախաղի օգնությամբ լուծվում են մի շարք խնդիրներ՝ երեխաները բացահայտում են իրենց ներքին աշխարհը,լուծում են ներքին կոնֆլիկտները,բարձրանում է երեխաների ինքնագնահատականը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս.Ա. Մարության,Ա.Մ.Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն Երևան-2008թ. Գլուխ 15 էջ 212-242
2. Ս.Ա Մարության նախադպրոցականի ինքնուրույնության դաստիարակումը միջանձնային հարաբերություններում Երևան -2008թ. գլուխ 3-րդ էջ 63-78
3. Մանկապարտեզի կրտսեր 1-ին և կրտսեր 2-րդ կրթական համալիր ծրագիր
4. Համացանց՝
    - https://tltaudit.ru/hy/heart-failure/syuzhetno-rolevye-igry-v-starshei-gruppe-kartoteka-s-celyami-po-fgos/
    - https://madreshoy.com/hy/3-juegos-de-rol-para-ninos/